«Էդիթ Պրինտ» հրատարկչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին:

Առարկա՝ Քիմիա

Ուսուցիչ՝ Հայրապետյան Հասմիկ

Դպրոց՝ Ա. Իսահակյանի անվան 16 ավագ դպրոց

Ղեկավար՝ Հակոբյան Մետաքսյա

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3

Մեթոդմիավորումների նշանակությունը դպրոցի ուսումնական գործունեության արդյունավետության բարձրացման գործում: ---------- 6

Առարկայական մեթոդմիավորման գործունեությունը դպրոցում: ---------- 7

Մեթոդմիավորման աշխատանքի կազմակերպման ձևերը: ---------- 10

Առարկայական մեթոդմիավորումը որպես սկսնակ ուսուցիչներին զարգացնող օղակ: ---------- 13

Ուսուցիչների մեթոդական մասնախումբը որպես մեթոդական աշխատանքների կազմակերպման ձև: ---------- 15

Եզրակացություն ---------- 19

Գրականության ցանկ ---------- 20

Ներածություն

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ: Առարկայական մեթոդական միավորումները ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից:

Առարկայական մեթոդական միավորումները քննարկում են հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալիս երաշխավորություններ: Քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը, ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում:

Առարկայական մեթոդական միավորումը նպաստում է ուսուցիչների որակավորման բարձրացմանը.

- կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ,
- ուսուցիչներին հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ,
- սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն,
- մանկավարժական խորհրդում քննարկելուց հետո դպրոցի տնօրենին ներկայացնում է առաջարկություն ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ,

- կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին,

- կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ:

Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են[1]:

Թեմայի արդիականությունը: Առարկայական մեթոդմիավորման աշխատանքը ուսումնական գործընթացի կազմակերպման կարևորագույն բաղադրիչներից է: Այն մանկավարժական կոլեկտիվի անդամների համակարգված գործունեությունն է, որի նպատակն է բարձրացնել նրանց ընդհանուր մանկավարժական ու հոգեբանական, գիտական-տեսական, առարկայական ու մեթոդական պատրաստակամությունը և մասնագիտական վարպետությունը:

Դպրոցում տարվող առարկայական մեթոդմիավորման աշխատանքներն ինքնանպատակ չեն, դրանք իրականացվում են սովորողների կրթության և դաստիարակության կայուն արդյունքների ստացման ու պահպանման նպատակով: Մեթոդմիավորման հիմնական նպատակներից է նաև՝ ստեղծել անհրաժեշտ պայմաններ մանկավարժների ստեղծագործական ներուժի բացահայտման և իրացման համար, զարգացնել ուսուցիչների հետազոտական, հաղորդակցական և կազմակերպական կարողությունները:

Թեմայի նպատակը: Ներկաացնել ուսուցչի մասնակցությունը դպրոցական մեթոդմիավորումների աշխատանքներին:

Խնդիրները: Ելնելով առաջադրված նպատակից ուսումնասիրել հետևյալ թեմաները.

1. Մեթոդմիավորումների նշանակությունը դպրոցի ուսումնական գործունեության արդյունավետության բարձրացման գործում:

2. Մեթոդմիավորումների նպատակը, խնդիրները և ուղղությունները:

---

[1] Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ա Թ Յ Ա Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Հավելված ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 801-Ն որոշման

3. Մեթոդմավորումների աշխատանքն ուսուցիչների հետ:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, աշխատանքին վերաբերող ենթամասերից, եզրակացությունից և գրականության ցանկից: Ենթամասերը ներկայացնում են առարկայական մեթոդմիավորման նշանակությունը դպրոցի ուսումնական գործունեության արդյունավետության բարձրացման գործում և առարկայական մեթոդմիավորման աշխատանքները սկսնակ և փորձառու ուսուցիչների հետ:

Մեթոդմիավորումների նշանակությունը դպրոցի ուսումնական գործունեության արդյունավետության բարձրացման գործում:

«Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ»:

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է դպրոցի մեթոդմիավորումների՝ որպես ուսումնական գործընթացի անմիջական կազմակերպչի և ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգողի գործունեությամբ: Մեթոդմիավորումը զբաղվում է ուսուցիչների մասնագիտական վարպետության բարձրացման հարցերով, կազմակերպում է նախագծային-հետազոտական աշխատանքներ, մասնակցում է փորձագիտական աշխատանքներին և այլն: Այս աշխատանքների հիմնական ծանրաբեռնվածությունն ընկած է մեթոդմիավորման նախագահի «ուսերին»: Մեթոդմիավորման նախագահը պետք է ունենա ինչպես մանկավարժական գործընթացները, այնպես էլ կոլեկտիվի աշխատանքը կազմակերպելու կարողություն: Նա պետք է կարողանա իր շուրջը համախմբել մարդկանց, ովքեր իրար հետ համագործակցում են, որոշ հարցերի շուրջ համաձայնության գալիս, միասնական լուծումներ գտնում ընդհանուր խնդիրների համար:

«Մեթոդմիավորման նախագահը բավականին ժամանակ պետք է տրամադրի ուսուցիչների և սովորողների հետ հաղորդակցմանը, իր սեփական մանկավարժական մասնագիտական որակների զարգացմանը: Կարելի է եզրակացնել, որ մեթոդմիավորումը դպրոցի հիմնական կառուցվածքային ստորաբաժանումն է, որն իրականացնում, համակարգում և ղեկավարում է մեկ կամ մի քանի առարկաների շրջանակներում կատարվող ուսումնադաստիարակչական, մեթոդական, փորձարարական, արտադասարանական աշխատանքներ և նպաստում է մանկավարժների մասնագիտական վարպետության, մեթոդական պատրաստակամության, ուսուցիչների ստեղծագործական ներուժի խթանմանն ու զարգացմանը»:[2]

[2] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան «Մեթոդական աշխատանքը դպրոցում», 2014, էջ 16

Առարկայական մեթոդմիավորման գործունեությունը դպրոցում:

Առարկայական մեթոդմիավորումը դպրոցում իրականացվող մեթոդական աշխատանքի կենտրոնական օղակն է և ստեղծվում է նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մեթոդմիավորման ընդհանուր կառավարումն իրականացնում է տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը: Մեթոդ-միավորման աշխատանքներն անմիջականորեն ղեկավարում է մեթոդմիավորման նախագահը: Մեթոդմիավորումն իր աշխատանքը կազմակերպում է կրթական հաս-տատության կանոնակարգող-իրավական փաստաթղթերի, ինչպես նաև վերոնշյալ մեթոդական կառույցների ընդունած որոշումների հիմքով՝ մանկավարժական կադրերի ներուժը մեթոդական, գիտահետազոտական աշխատանքներում ներգրա-վելու նպատակով: Մեթոդմիավորումն իրականացնում է մեթոդական աշխատանքի կազմակերպումն ու ղեկավարումը՝ հաշվի առնելով դպրոցի առջև ծառացած խնդիրները, ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկու-թյունները, յուրաքանչյուր ուսուցչի մասնագիտական վարպետության զարգացման մակարդակը: Մեթոդմիավորման աշխատանքների վերահսկողությունն իրականաց-նելու համար դպրոցի տնօրինությունը պետք է հստակ պատկերացնի մեթոդմիա-վորման խնդիրները, գործունեության բովանդակությունը, մեթոդմիավորման անդամների պարտականությունները, նախագահի գործառույթները:

Յուրաքանչյուր մանկավարժ պարտավոր է՝

- անդամակցվել դպրոցում ձևավորված մեթոդմիավորումներից որևէ մեկին,
- ունենալ սեփական մասնագիտական ինքնակրթության պլան,
- իրազեկ լինել սովորողների ուսումնառության և դաստիարակման մակարդակի բարձրացմանը նպաստող ժամանակակից տեխնոլոգիաներին,
- ուղղորդվել մեթոդմիավորման աշխատանքները կարգավորող կանոնակարգող-իրավական փաստաթղթերով,
- ակտիվորեն մասնակցել մեթոդմիավորումների նիստերին, գործնական սեմի-նարներին և այլն,
- մասնակցել բաց դասերի, միջոցառումների մշակմանը, ձգտելով բարձրացնել մասնագիտական վարպետության մակարդակը,

- կարողանալ վերլուծել իր աշխատանքը՝ արձանագրելով իր առաջընթացը և դժվարությունները:

Մեթոդմիավորման գործունեության նպատակը և խնդիրները:

Մեթոդմիավորման գործունեության հիմնական նպատակը մանկավարժական կադրերի մասնագիտական կրթության և անընդմեջ մեթոդական ուսումնառության ապահովումն է միասնական որոնողական աշխատանքների միջոցով: Նպատակն իրագործելու համար իրականացվում են աշխատանքներ հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Ուսումնադաստիարակչական գործունեության խնդիրները և աշխատանքները՝

- դասավանդումը կազմակերպել ըստ ուսումնական պլանի,
- անցկացնել ընթացիկ խորհրդատվություններ և անհատական պարապմունքներ՝ ծրագրային որոշակի թեմաների շուրջ,
- անցկացնել սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումներ,
- ղեկավարել հետազոտական և նախագծային աշխատանքներ տվյալ առարկայի շրջանակում և կազմակերպել դրանց շնորհանդեսներ,
- ըստ դասացուցակի անցկացնել ուսումնական պարապմունքներ,
- կազմակերպել անհատական պարապմունքներ, խմբակներ,
- տվյալ առարկայից կազմակերպել մրցույթներ, օլիմպիադաներ, գիտաժողովներ,
- կազմակերպ արտադասարանական միջոցառումներ:

2. Ուսումնամեթոդական գործունեության խնդիրները ու աշխատանքները՝

- կատարելագործել սովորողների ուսման որակը,
- զարգացնել մասնագիտական մակարդակը, ուսումնական առարկաների դասավանդման մակարդակը,
- իրականացնել դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի մշակումը և կատարելագործումը,

- խմբակների, թույլ կարողություններ ունեցող աշակերտների հետ պարապմունքների համար կազմել ծրագրեր,

- հիվանդության պատճառով երկարատև բացակայած սովորողների համար մշակել առաջադրանքներ և ուսումնական նյութեր,

- աշխատանքներ տանել ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման շուրջ (մեթոդական նյութերի, թեստերի, ծրագրերի մշակում),

- մշակել թեմատիկ հարցարաններ,

- կազմակերպել քննական հարցարաններ,

- ըստ առարկաների մուտքային ընթացիկ և ամփոփիչ ստուգումների արդյունքների ստեղծել շտեմարան,

- ստեղծել բաց դասերի, արտադասարանական միջոցառումների, տեսաֆիլմերի դարան:

3. Կազմակերպական-մեթոդական գործունեության խնդիրները և աշխատանքները՝

- մասնակցել կրթական կազմակերպությունների կազմակերպած աշխատանքներին, միջոցառումներին,

- համագործակցել դպրոցի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ,

- մասնակցել ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման աշխատանքի պլանով նախատեսված աշխատանքների իրականացման գործընթացին,
- մասնակացել քաղաքի, համայնքի և այլնի մակարդակով կազմակերպված կրթական միջոցառումներին,

- մասնակցել դպրոցի խորհուրդներին (մանկավարժական, մեթոդական և այլն),

- կազմել մեթոդմիավորման փաստաթղթեր (պլաններ, ժամանակացույցեր, հաշվետվություններ, կարգեր, կանոնադրություններ և այլն),

- նախապատրաստել և անցկացնել գիտաժողովներ, մանկավարժական զեկույցներ, վարպետության դասեր:

4. Խորհրդատվական գործունեության խնդիրները և աշխատանքները՝

- ցուցաբերել բազմակողմանի օգնություն մեթոդմիավորման անդամներին, ծնողներին՝ տվյալ առարկայի շրջանակում կրթական գործունեությանը վերաբերող հարցերի շուրջ:

- խորհրդատվություն՝ սովորողներին, ուսուցիչներին, ծնողներին տվյալ առարկայի ուսուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ:

Մեթոդմիավորման աշխատանքի կազմակերպման ձևերը:

- մեթոդմիավորման նիստերը, որտեղ քննարկվում են սովորողների ուսուցման և դաստիարակման հարցերը,
- «Կլոր սեղանների կազմակերպումը», ուսումնամեթոդական խնդիրների շուրջ տեսական և գործնական սեմինարների անցկացումը, ուսուցիչների ստեղծագործական հաշվետվությունները,
- դասախոսություններ, զեկույցներ, գիտագործնական համաժողովներ, ստեղծագործական բանավեճեր ուսուցման և դաստիարակման, ընդհանուր մանկավարժության և հոգեբանության հարցերի շուրջ,
- առարկայական շաբաթ, հյուրասրահ, կոլեկտիվ ստեղծագործ աշխատանքի ժամ, գործնական խաղեր, իրավիճակային ուսուցում, մեթոդական մրցամարտ,
- փոխադարձ դասալսումներ, բաց դասեր, մեթոդական վարպետության դասեր, «Ակվարիում», որոնողա-ստեղծագործական աշխատանքներ, գործնական աշխատանքներ, նախագծեր,
- «Տարվա ուսուցիչ» մրցույթներ, մեթոդական փառատոններ և այլ մեթոդական միջոցառումներ:

Մեթոդմիավորման աշխատանքը սկսնակ և փորձառու ուսուցիչների հետ:

Առարկայական մեթոդմիավորման աշխատանքների կազմակերպման մի քանի ներգործուն ձևեր շատ մեծ նշանակություն ունեն ուսուցչի մասնագիտական զարգացման մեջ: Մեթոդմիավորման ներգործուն ձևերն են՝ գործնական սեմինարը, բանավեճը, «Ակվարիում»-ը, «Կլոր սեղան»-ը, դիդակտիկ խաղերը, վարպետության դասերը և այլն:

Գործնական սեմինարների ընթացքում ուսուցիչները ծանոթանում են ոչ միայն տեսական հարցերին, այլև ուսումնասիրում են գործնականում տեսական հարցերի իրագործման հնարավորությունները: Այս սեմինարը պահանջում է առավել մանրամասն նախապատրաստական աշխատանք, քանի որ սեմինարի ընթացքում ուսուցիչները ծանոթանում են իրենց սեփական որոնողական-հետազոտական աշխատանքների արդյունքներին: Առարկայական մեթոդմիավորման այս ձևն ուսուցիչներին մղում է ստեղծագործական, հետազոտական, գործունեության:

Բանավեճը առարկայական մեթոդմիավորման անդամների դատողությունների, կարծիքների, մտքերի փոխանակումն է՝ լուծում պահանջող որևէ խնդրի շուրջ: Հստակ կազմակերպված բանավեճը զարգացնում է ուսուցչի հաղորդակցական և վերլուծական ունակությունները, օգնում է բացահայտել որոշակի խնդիրների շուրջ ունեցած պատկերացումները:

«Ակվարիումը» բանավեճային աշխատանքի ձև է, որը հնարավորություն է տալիս ուսուցիչներին արտահայտել որոշակի հարցերի շուրջ իրենց ունեցած հակասությունները:

«Կլոր սեղանն» աշխատանքի կազմակերպման ձև է, որին մասնակցում է մոտ տասը ուսուցիչ: Այն հնարավորություն է տալիս ուսուցիչներին ներկայացնել իրենց փորձը, մտքերի փոխանակում անել, արտահայտել ու պաշտպանել իրենց սեփական տեսակետները, առաջարկել մոտեցումներ տարբեր խնդիրների լուծման շուրջ:

Առարկայական մեթոդմիավորման կարևորագույն ուղղություններից մեկն է նաև ուսուցիչների ինքնակրթության կազմակերպումը:

Մեթոդմիավորումները կազմակերպում են նաև ուսուցիչների ինքնակրթությունը, որը նույնպես ապահովում է ուսուցչի մասնագիտական զարգացումը: Հոգեբանները պարզել են, որ համոզմունք են դառնում միայն այն գիտելիքները, որոնք մարդը ձեռք է բերել ինքնուրույն կրթական գործունություն ծավալելու ընթացքում:

Այս գործընթացն առավել արդյունավետ ձևով հնարավոր է կազմակերպել առարկայական մեթոդմիավորման նիստերի ընթացքում՝ դրանց արդյունքները ներկայացնելով տարբեր ձևերով (զեկույցներ, բաց դասեր, ստեղծագործական հաշվե-

տվություններ): Այս աշխատանքները նախօրոք պլանավորվում են և վերահսկվում մեթոդմիավորման նախագահի կողմից: Ուսուցիչների ինքնակրթության գործընթացն իր մեջ ներառում է մեթոդական աշխատանքի բոլոր բաղադրիչները: Դպրոցում աշակերտների ուսուցման և դաստիարակության որակն անմիջականորեն կախված է ուսուցիչների պատրաստվածության մակարդակից: Այն պարբերաբար անհրաժեշտ է բարձրացնել՝ ընդգրկելով ուսուցիչներին որակավորման բարձրացման տարատեսակ վերապատրաստման դասընթացների շրջանակում կազմակերպվող սեմինարներին, գիտաժողովներին և այլն: Սակայն այս գործընթացում բավականին մեծ է նաև մանկավարժի՝ որպես իր ինքնակրթությունը կազմակերպողի դերը:

«Ինքնակրթություն» բառն ինքնին ենթադրում է կամավոր, գիտակցված, սեփական գործունեության ինքնավերլուծության և ինքնակարգավորման գործընթաց:

Գերմանացի մանկավարժ Ադոլֆ Դիստերվեգը շատ ճշմարտացիորեն նկատել է.

«Անձի դաստիարակությունն ավարտվում, իր նպատակին է հասնում այն ժամանակ, երբ անձն այնքան է հասունանում, որ ունենում է հետագա կյանքի ընթացքում ինքն իրեն կրթելու ուժ և կամք, իմանում է միջոցներ և հնարներ, թե ինչպես դա կարող է իրականացնել որպես արտաքին աշխարհի վրա փոխազդող անհատ»:

Ինքնակրթությամբ զբաղվելու ունակությունը որոշվում է յուրաքանչյուր մանկավարժի մտավոր կարողության չափանիշներով: Ինքնակրթությամբ զբաղվելու ցանկությունը կախված է մի շարք գործոններից. ինքնակրթվելու անհրաժեշտության գիտակցում, ժամանակի ոգով աշխատող ուսուցիչ լինելու ցանկություն, լրացուցիչ որոշակի ժամանակի տրամադրում, դրդապատճառների առկայություն կամ բացակայություն և այլն:

Ինքնակրթությամբ զբաղվելու համար ուսուցիչը պետք է ունենա հետևյալ շարժառիթները.

- ստեղծագործելու ցանկություն,
- տեղեկատվական աղբյուրների հետ ամենօրյա աշխատանք,
- մրցակցություն,
- հետաքրքրվածություն,
- նյութական շահագրգռվածություն,

- հասարակական կյանքի փոփոխություններ,
- մանկավարժական և կրթական նորույթներ:

Հարկավոր է, որ այս շարժառիթները մշտապես ուսուցչի տեսադաշտում լինեն, որպեսզի ինքնակրթության գործընթացը կրի կանոնավոր բնույթ: Անհերքելի ճշմարտություն է՝ աշխատանքում երբեք տեղում չդոփել: Դոփեցիր՝ զարգացման մեջ նահանջում ես, հատկապես արդի ժամանակներում (գիտական, կրթական նվաճումներ, հասարակական կյանքի փոփոխություններ և այլն):

«Ինքնակրթությունը խթանում է ուսուցչի ճանաչողական ակտիվությունը՝ ապահովելով ինքն իրացման ճանապարհով նրա շարունակական կրթության պահանջվածությունը»:[3]

Առարկայական մեթոդմիավորումները ստեղծում են ինքնակրթական գործընթացներ, որոնք հնարավորություն են տալիս ուսուցիչներին.

- մասնակցություններ ունենալ բազմաթիվ սեմինարների, համաժողովների, գործընկերների դասերին, քննարկել և վերլուծել դրանք,
- լուծել թեստեր, խաչբառներ, հետաքրքրաշարժ խնդիրներ՝ այդպիսով զարգացնելով իմացական ընդհանուր մակարդակը,

մասնակցել բանավեճերի, խորհրդակցությունների, փորձի փոխանակման,

- ուսումնասիրել ժամանակակից մանկավարժական, առարկայական, հոգեբանա-մանկավարժական գրականություն:

Առարկայական մեթոդմիավորումը որպես սկսնակ ուսուցիչներին զարգացնող օղակ:

Սկսնակ ուսուցչի խնդիրն է յուրացնել ուսումնական գործընթացի կազմակերպման մեթոդական ընդհանուր մոտեցումները: Դպրոց մուտք գործած սկսնակ ուսուցչի հետ պետք է առանձնահատուկ աշխատանքներ կազմակերպել: Այս աշխատանքներն իրականացնում է առարկայական մեթոդմիավորման նախագահը, ում պարտակա-

[3] Տես՝ Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան «Մեթոդական աշխատանքը դպրոցում», 2014, էջ 107

նությունն է օգնել սկսնակ ուսուցիչներին իրենց տեսական գիտելիքները գործնականորեն կիրառել ուսումնական գործընթացում: Առարկայական մեթոդմիավորման նախագահը կազմակերպում է սկսնակ ուսուցիչների համար խորհրդատվություններ, ներգրավում է նրանց վերապատրաստման դասընթացներին:

Առարկայական մեթոդմիավորումն իր գործունեությամբ.

- նպաստում է սկսնակ ուսուցիչների մանկավարժահոգեբանական պատրաստակամությանը,

- ձևավորում է մանկավարժական աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու մշակույթ,

- օգնում է սկսնակ ուսուցիչներին ձեռք բերել տարբեր ուսումնական գործունեություններ իրականացնելու կարողություններ և հմտություններ,

- օգնում է սկսնակներին ձևավորել մանկավարժական գործունեություն ծավալելու համապատասխան կարողություններ,

- սկսնակ ուսուցիչների մոտ զարգացնում է սովորողների գիտելիքների, կարողությունների մակարդակներն ու ուսումնառության արդյունքները հայտորոշելու և գնահատելու կարողություններ,

- ձևավորում է սկսնակ ուսուցիչների մոտ սեփական մանկավարժական գործունեության ինքնավերլուծություն կատարելու հմտություններ,

- օգնում է ձեռք բերել ուսումնական աշխատանքը պլանավորելու կարողություններ,

- օգնում է ընտրել սովորողների ընդունակություններին համապատասխան՝ ուսուցման և դաստիարակության ձևեր և մեթոդներ, ինչպես նաև մանկավարժական տեխնոլոգիաներ.

- օգնում է ծավալել կազմակերպչական գործունեություն,

- նպաստում է նախաձեռնության և ինքնության դրսևորմանը,

- զարգացնում է մանկավարժական գործության վերաբերյալ սկսնակ ուսուցիչների հետաքրքրությունը, մանկավարժական աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքը:

«Այսպիսով մեթոդմիավորումը կապող օղակ է՝ սկսնակ ուսուցչի տեսական պատրաստվածության և նրա ինքնուրույն աշխատանքի միջև՝ նրանց կողմից

իրականացվող գործնական-մանկավարժական գործունեության փորձի և մասնագիտական որակների ձեռքբերման գործում»:[4]

Մեթոդական միավորման նիստի անցկացման ծրագիր:

Նպատակը. Մասնագիտական ու մեթոդական հմտությունների և կարողություններ-ի կատարելագործում, տեսական գիտելիքների հիման վրա դասի վերլուծություն և ներդաշնակություն ապահովելու խնդիր:

Մեթոդական միավորման աշխատանքային պլանը, որպես կանոն, բաղկացած է երկու մասից՝ ՄՄ նիստերի պլանավորում, սեկցիոն աշխատանք:

Սեկցիոն աշխատանքը պարունակում է գործունեության նույն ոլորտները, ինչ մեթոդական աշխատանքային պլանը: Բացի այդ, ներառված են հետևյալ գործո-ղությունները.

- սովորողների արտադպրոցական գործունեության կազմակերպում,
- սովորողների ուսուցման մակարդակի վերահսկում,
- փոխադարձ դասալսումներ և այլն:

ՄՄ նիստերի օրակարգերը պետք է ներառեն հարցեր, որոնք բացահայտում են ուսումնական տարվա աշխատանքների թեմաները (նպատակները):

Ուսումնական տարվա վերջում նպատակահարմար է վերլուծել աշխատանքային պլանը: Վերլուծության հնարավոր տարբերակներից մեկը կարող է լինել գնահատ-ման թերթիկի մեթոդը: Յուրաքանչյուր ուսուցիչ ստանում է ավարտված գործերի աղյուսակ, որտեղ նշվում է անձնական մասնակցության աստիճանը, օգտակարու-թյան գնահատումը (անձնապես ուսուցչի համար) 10 բալանոց սանդղակով և առա-ջարկություններ:

Տվյալների մշակումից հետո հնարավոր է եզրակացություններ անել միջոցառման օգտակարության, հետագայում այս ձևի օգտագործման անհրաժեշտության մասին, գնահատել յուրաքանչյուր ուսուցչի անձնական մասնակցությունը, վերլուծել առա-ջարկները:

---

[4] Տես՝ Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան «Մեթոդական աշխատանքը դպրոցում», 2014, էջ 102

Դպրոցի ուսուցիչների փորձի ուսումնասիրում և ամփոփում:

Փորձի ուսումնասիրման և ընդհանրացման աշխատանքների կազմակերպումը պետք է հիմնված լինի երկու հիմնական սկզբունքների վրա՝ նպատակահարմարության և կամավորության:

Նպատակահարմարության սկզբունքը ներառում է ուսումնական հաստատության համար կոնկրետ ուսուցչի փորձի անհրաժեշտության և նշանակության հարցի ուսումնասիրությունը:

Կամավորության սկզբունքը հիմնված է ուսուցչի գիտակցված ցանկության վրա՝ մասնակցելու այս տեսակի աշխատանքներին: Ուսուցչի աշխույժ հետաքրքրությունն արդեն կազմակերպված աշխատանքի հաջողության կեսն է:

Փորձն ուսումնասիրելիս և ամփոփելիս ցանկալի է օգտագործել աշխատանքի հետևյալ ձևերը՝ բաց դասեր, խորհրդատվություն, ստեղծագործական զեկույցներ, շնորհանդեսներ, մանկավարժական գերազանցության շաբաթներ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, սեմինարներ՝ փորձի ուսումնասիրման և ամփոփման մեթոդաբանություն մշակելու համար:

Ուսումնասիրվում է նաև ուսուցչի գործունեությունը, նրա ներդրումը մեթոդական ձևավորման գործում, ուսուցչի մանկավարժական արդյունքները, թեմայի շուրջ արտադասարանական աշխատանքը: Եվ, իհարկե, ուսուցչի կողմից դասավանդվող առարկայի սովորողների գիտելիքների մակարդակը:

Ուսուցիչների մեթոդական մասնախումբը որպես մեթոդական աշխատանքների կազմակերպման ձև:





ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առարկայական մեթոդմիավորումը շատ մեծ դեր ունի ուսումնական գործընթացի կազմակերպման գործում: Այն մանկավարժական կոլեկտիվի անդամների համակարգված գործողությունն է, որը բարձրացնում է ուսուցիչների ընդհանուր մանկավարժական և հոգեբանական, գիտական-տեսական, առարկայական ու մեթոդական պատրաստականությունը, մասնագիտական վարպետությունը: Առարկայական մեթոդմիավորման դերը դպրոցում ինքնանպատակ չէ: Այն բազմաթիվ աշխատանքներ է կատարում դպրոցում՝

1. Կազմակերպում է ուսուցիչների մասնագիտական վարպետության բարձրացման ուղղությամբ գիտական սեմինարներ, բանավեճեր, գիտագործնական համաժողովներ, մանկավարժական մարաթոններ:

2. Հնարավորություն է տալիս մեթոդմիավորման անդամներին ծանոթանալ այլ դպրոցների ուսուցիչների նորարարական գործունեության փորձերին, կատարել փորձի փոխանակում:

3. Օգնում է ուսուցիչներին բավարարել իրենց մասնագիտական կարիքները և տեղեկատվական պահանջմունքները:

4. Իրազեկում է ուսուցիչներին ընդհանուր կրթական ուղությունների, կրթական ծրագրերի բովանդակության, նոր դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների, կանոնակարգող-իրավական փաստաթղթերի մասին,

5. Մշակում և վերակառուցում է ուսուցման և դաստիարակության նոր ձևեր, միջոցներ, մեթոդներ,

6. Մեծ աշխատանք է տանում սկսնակ ուսուցիչների հետ: Օգնում է նրանց գործնականում ճիշտ կիրառել իրենց տեսական գիտելիքները:

Առարկայական մեթոդմիավորումը դպրոցի ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչներից է, որը նպաստում է թե՛ վարպետ, թե՛ սկսնակ ուսուցիչների մասնագիտական զարգացմանը:

Այն ոչ միայն կրթում է ուսուցիչներին՝ նրանց համար ստեղծելով աշխատանքային նորարարական մեթոդներ, այլ նաև օգնում է ուսուցիչներին ինքնակրթվել:

Գրականության ցանկ

1. Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության

Հավելված ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 801-Ն որոշման

2. Թամանյան Գ. «Դպրոցի մեթոդական աշխատանքի մի քանի հարցեր», Լույս, Երևան

3. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Մանուկյան Մ., «Մեթոդական աշխատանքը դպրոցում», 2014, Զանգակ-97 ՍՊԸ

4. Միրզոյան Ա., Բեջանյան Ռ., Մխեյան Գ., «Ներդպրոցական վերահսկողության պլանավորում և իրականացում», Երևան 2014,